

Լուովի հայոց մայր տաճարը
(կառուցուած՝ 1363 թ.)

եղած նշումը, թէ «հոգին ուանդեց 1551 թ. յունուարի 14ին» (animam suam Deo tradidit Anno Domini 1551 die 14 Ianuarij) վերաբերում է Ստեփանոս Ա-ին եւ ոչ թէ Ստեփանոս Սալմաստեցուն, քանի որ, հենց Պետրովիչի ձեռքով յայտնաբերուած արխիւային մի վաւերագրի համաձայն, Սալմաստեցին դրանից յետոյ՝ 1551 թուականի մայիսի 19-ին իսկ դեռ կենդանի էր[59]։

Ստեփանոս Ա-ի մասին է յատուկ շեշտով գրուած «որ եւ յերկար ապրեցաւ» խօսքը, որ կայ «Լուովեան յիշատակարան»-ում եւ դա առաւել եւս իրաւունք է տալիս մեզ ասելու, որ 1551 թ. յունուարի 14-ին մահացողը նա է[60]։

Իսկ Լուովի դամբանագիրը որն, ինչպէս ասել ենք ժամանակին եւ ասում ենք նաեւ հիմա, անկասկած կեղծ է։ Այդ դամբանագիրը, որ ժամանակակից չէ երկու Ստեփանոսներից ոչ մէկին, յարմարովի կառուցուածք ունի։ Մեր կարծիքով դրա հիմքը կազմել է Ստեփանոս Ա-ի այժմ անյայտ գերեզմանի վրայ գտնուած արձանագրութիւնը՝ 14 յունուարի 1551 թուականով, որի վրայ բնականաբար նաեւ պիտի

---

59 ՊՍՍ էջ 44 եւ 106։ PChA p. 97 – 98.

60 «Լուովեան յիշատակարան»-ը, ինչպէս առհասարակ լեհական գրեթէ բոլոր աղբիւրները, կա՛մ շփոթաբար ի մի են ձուլում երկու Ստեփանոսներին, կա՛մ էլ, անշատ դնելու դէպքերում, իրար են խառնում նրանց վերաբերող տեղեկութիւնները։ «Լուովեան յիշատակարան»-ում գտնուող «որ եւ յերկար ապրեցաւ» յաւելումը (տես Հ. Մ. Բժշկեան, «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան», էջ 107, մեր կարծիքով, վերաբերում է Ստեփանոս Ա-ին, քանի որ Սալմաստեցին երկար չի ապրել։